վերաբերյալ անոտացիաներ, լուսանկարներ և փաստաթղթեր։

Ուղարկված փաստաթղթերից ուշագրավ է Գվարդիական Հայկական 51 հրաձգային դիվիզիայի[1] պատմությունը։

Նույն դիվիզիայի մարտիկների, սերժանտների և հրամանատարների նամակը ուղղված Հայաստանի աշխատավորությանը։

Լենինգրադ ուղարկված փաստաթղթերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Բանակի Ռազմական խորհրդի անդամ Բենիամին Գայլուսյանի մասին եղած նյութերը։ Լենինգրադցիները մինչև օրս էլ մեծ սիրով են խոսում հերոս քաղաքի մեծ հայրենասեր գեներալ-մայոր Գայլուսյանի մասին և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով Լենինգրադի աշխատավորներն ու Լենինգրադի Ռազմական օկրուգը Ալեքսանդր Նևսկու լավրայում կանգնեցրել են նրա մարմարյա հուշարձանը։ Ուղարկված նյութերը մեծ խնամքով են պահվում համապատասխան թանգարանների արխիվներում և ցուցադրված լուսանկարներն ու փաստաթղթերը գրավում են այցելուների ուշադրությունը։

Կաբինետը սերտ կապի մեջ է գտնվում Հայրենական Մեծ պատերազմի աչքի ընկնող զորավարների ու ադմիրալների հետ, որոնք մեծ օժանդակություն են ցույց տալիս Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվի հարստացմանը և Հայրենական պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերվող հարցերի ավելի լրիվ լուսաբանմանը։

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԻՆ

Հիմնվելով սոցիալիզմի սիստեմի առավելությունների վրա, ՍՄԿՊ-ն դրել է համաշխարհային պատմական նշանակության խնդիր՝ ՍՍՌՄ-ի բնակչության համար ապահովել կյանքի ամենաբարձր մակարդակ, կապիտալիստական ամեն մի երկրի համեմատությամբ։

Պարտիայի Ծրագրում նշված են առաջիկա տասնամյակում և քսանամյակում սովետական ժողովրդի կյանքի մակարդակի բարձրացման ցուցանիշների մի ընդարձակ սիստեմ։

Այդ վիթխարի, խորապես մարդկային պլանը կյանքում իրականացնելու գործում մեծ աներկիներ ունեն ժողովրդական բարեկեցության ուսումնասիրությամբ զբաղվող տնտեսագետները։

Կյանքի մակարդակի ուսումնասիրման բնագավառում կարևոր իրադարձություն էր 1961 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում հրավիրված Համամիութենական գիտական սեմինարը՝ նվիրված ժողովրդական սպառման պրոբլեմի հետազոտման գործում մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառմանը։ Սեմինարը համատեղ հրավիրել էին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Աշխատանքի և աշխատավարձի Պետական Կոմիտեի Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտը։

Սեմինարի հնգօրյա աշխատանքների ընթացքում ժողովրդական սպառման պրոբլեմի մասին լսվեցին 22 զեկուցում և 20 ընդարձակ ելույթներ։

Բացման խոսքով սեմինարում հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը։

«Ժողովրդական սպառման դինամիկական մոդելները» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի Տնտեսագիտական-վիճակագրական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ Ա. Կարապետյանը։ Նա նշում է, որ յուրաքանչյուր մաթեմատիկական մոդել պետք է վերարտադրի ուսումնասիրվող երևույթների հիմքում ընկած քանակական հարաբերակցությունները։ Ժողովրդական սպառման բնագավառում այդ հարաբերակցությունները ստանում են հետևյալ տեսքը՝ սպառման ծավալը հավասար է սպառողների քանակի և սպառման նորմայի արտադրյալին։ Այս հավասարումը պլանային հաշվարկումների մեջ օգտագործելու համար պետք է իմանալ ոչ միայն սպառողների թիվը, այլև կանխորոշել նրանց ապագա սպառման նորմաները։ Զեկուցողի կարծիքով ապագա նորմաների որոշման հարցում կարելի է ունենալ երկու մոտեցում

[1] 76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան Ստալինգրադի հերոսական մարտերում աչքի ընկած ծառայությունների համար արժանացավ գվարդիական կոչման և վերանվանվեց 51-րդ Գվարդիական հրաձգային դիվիզիա։

ա) նորմայի նախնական սահմանում, բ) նորմայի կանխատեսում։

Առաջին դեպքում հարցի պատասխան պետք է ստանալ բժշկական և այլ գիտություններից, իսկ երկրորդի համար անհրաժեշտ է կառուցել մաթեմատիկական մոդելներ։ Դինամիկական մոդելների կառուցման կոնկրետ խնդիրը զեկուցողը կապում է սոցիալ-տնտեսական վերլուծությունների մեջ խմբավորման դերի մասին լենինյան ցուցումի իրացման հետ։ Խմբավորման եղանակը հնարավորություն է տալիս ստանալ համասեռ համակցություններ, որոնց ներսում նորմաների տարբերությունները պետք է վերագրել ոչ էական, պատահական գործոնների։ Այդ իմաստով միատարր խմբի միջին նորման կարող է հանդես գալ որպես տվյալ գործոնների համատեղ ազդեցության արդյունք։ Այդ ձևով ստացված բոլոր միջին նորմաները կարտահայտեն սպառման գոյություն ունեցող ռեժիմը։ Վերջում զեկուցողը հաղորդում է, որ Տնտեսագիտական-վիճակագրական հետազոտությունների լաբորատորիան այդ սխեմայով արդեն կատարում է առաջին հաշվարկները։

ՍՍՌՄ Պետտնտեսանձնաժողովի Արտադրողական ուժերի ուսումնասիրման խորհրդի (СОБС) մաթեմատիկական մեթոդների լաբորատորիայի վարիչ Ա. Մինցի զեկուցումը նվիրված էր դինամիկական մոդելների կառուցման կապակցությամբ անձնական սպառման գործոնների ազդեցության վերլուծությանը։ Ընդգծելով ժողովրդական սպառման պրոբլեմի ուսումնասիրման շարունակ աճող հրատապությունը, զեկուցողը նշում է, որ ժողովրդական սպառման մոդելի հարցը հանդիսանում է ժողովրդական տնտեսության մոդելի պրոբլեմի անբակտելի մասը և առանձին դիտվել չի կարող։ Սպառման բնագավառում հեռանկարային հաշվարկումներ կատարելու համար նախ պետք է մանրազնին հետազոտել սպառման կազմավորման վրա ազդող գործոնները և ապա կառուցել փոխադարձորեն ուղղակի և անուղղակի կապված մոդելների սիստեմ։ Այդ մոդելները պետք է մշակվեն ոչ միայն երկրի համար ամբողջովին, այլ նաև տեղական առանձնահատկությունները (կլիմայական, ազգային սովորություններ և այլն) հաշվի առնելով՝ ըստ միութենական ռեսպուբլիկաների, տնտեսական մեծ շրջանների և այլն։

Վ. Նվիրկովի (Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտ) հարակից զեկուցման մեջ խոսվում էր մի շարք գործոնների մասին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ժողովրդական սպառումը դինամիկայով պլանավորելիս։ Զեկուցողը, որպես գործոնների ուսումնասիրման պարզագույն մեթոդ, առաջարկում է խմբավորումը։ Սպառման վրա եկամուտների, ընտանիքի կազմի ու չափի և այլ գործոնների ազդեցությունը նախ պետք է ուսումնասիրել սկզբնական տեսքով, անջատ-անջատ և այնուհետև միավորել մեկ ընդհանուր բանաձևի մեջ։ Նա նշում է նաև արտադրության, գնի, սպառման սովորությունների փոփոխության և այլ գործոնների հաշվառման անհրաժեշտությունը։

Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտի աշխատակից Ն. Ռիմաշևսկայայի զեկուցումը նվիրված էր սպառման դիֆերենցիալ բալանսի մոդելով կատարված կոնստրուկտիվ հաշվարկներին։ Զեկուցողը խոսում է երեք խումբ տվյալների մասին, որոնք անհրաժեշտ են սպառման մոդելով հաշվարկումներ կատարելու համար։ Դրանք են՝ ա) նյութական ապահովվածության տարբեր մակարդակ ունեցող ընտանիքների ծախսումների և սպառման կառուցվածքը բնութագրող գործակիցների աղյուսակներ. բ) նյութական ապահովվածության տվյալ մակարդակն ունեցող ընտանիքների խմբի սպառման ծավալը. գ) բոլոր ընտանիքներում տվյալ տեսակի մթերքի սպառումը։

Զեկուցողը նշում է, որ Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտում այդ մոդելով հաշվարկումներ է կատարվել բանվորների և ծառայողների ընտանիքների համար։ Մոդելի նշանակությունը հսկայական է։ Այն հնարավորություն է տալիս պլանավորվող ժամանակամիջոցի համար որոշել սպառման կառուցվածքը, հաշվի առնել բնակչության բարեկեցության բարձրացման նպատակով անցկացվելիք յուրաքանչյուր միջոցառման ազդեցությունը սպառման կառուցվածքի վրա, այդ միջոցառումներից ընտանիքների շահած գումարների չափը և այլն։

Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի աշխատակից Է. Աղարարյանը նշեց, որ Հայկական ՍՍՌ բնակչության եկամուտների և սպառման դիֆերենցիալ բալանսի կառուցումը վիճակագրական բազայի բացակայության պատճառով դեռևս անհնարին է։ Առայժմ կառուցվել է ռեսպուբլիկայի աշխատավորների եկամուտների և սպառման 1960 թվականի ամփոփ բալանսը։ Հաշվարկումներով ստուգվեց դիֆերենցիալ բալանսի կառուցման թեորիական սխեման, անհրաժեշտ լրացում կատարվեց Հայկական ՍՍՌ ազգային եկամտի արտադրության ու բաշխման և բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի բալանսների ցուցանիշների համար։

Ժողովրդական տնտեսության միջճյուղային բալանսում ժողովրդական սպառման ցուցանիշների հաշվառման մեթոդոլոգիայի մասին զե-

կուցումով հանդես եկավ ՍՍՌՄ Պետտնտհանձնա.ժողովի Տնտեսագիտության ինստիտուտի աշխատակից Ն. Կիրիչենկոն։ Նշելով ՍՍՌՄ ԿՎՎ հաշվարկած 1959 թ. միջնյուղային փաստաթղթի բալանսի մեծ նշանակությունը, զեկուցողը կանգ առավ առանձին հարցերի վրա, որոնք պահանջում են հետագա մշակում։ Նա ուշադրություն դարձրեց այն բանի վրա, որ ՍՍՌՄ ԿՎՎ մինչև այժմ դեռ չի պարզաբանել շախմատային բալանսի գիրքերի լրացման մեթոդիկան։ Մինչդեռ տվյալների կոնկրետ վերլուծության անհրաժեշտությունն ակնհայտ է, քանի որ առանձին տվյալներ վերլուծելիս բացահայտվում են լուրջ սխալներ։ Սպառման ֆոնդի վերլուծության տեսակետից այնքան էլ արդարացված չէ ժողովրդական տնտեսության ճյուղերի ագրեգատավորման որոշ մոմենտները։ Զեկուցողը հաղորդում է, որ ՍՍՌՄ Պետտնտհանձնաժողովի Տնտեսագիտության Գիտա-հետազոտական ինստիտուտի կազմած ժողովրդական տնտեսության արտադրանքի արտադրության և բաշխման 1962 թ. միջնյուղային պլանային բալանսում կգալի չափով վերացված են նկատված թերությունները։ Այնուհետև ընկեր Կիրիչենկոն քննադատում է սպառման ֆոնդի պլանավորման և հաշվառման գոյություն ունեցող պրակտիկան։

Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտի Երևանի հենակետի աշխատակից Լ. Դավթյանը իր զեկուցման մեջ նշեց, որ ժողովրդական սպառման դիֆերենցիալ բալանսի կառուցման խնդիրը մեծ չափով դժվարանում է կոլտնտեսականների ընտանիքների համախառն եկամուտների հաշվարկման պատճառով։ Կոլտնտեսականների եկամուտները բանվորների և ծառայողների համեմատությամբ ունեն բարդ կառուցվածք։ Կարելի է բյուջետային տվյալները տարածել գլխավոր համակցության՝ ռեսպուբլիկայի ամբողջ կոլտնտեսային գյուղի բնակչության վրա։ Այդ ուղղությամբ կատարվում են հաշվարկներ, որոնց հիմքում դրված են՝ ա) միջինների կշռման եղանակը, բ) յուրաքանչյուր հաջորդ աստիճանին անցնելիս (հետազոտվող տնտեսություններ, կոլտնտեսություն, շրջան, գոնա, ռեսպուբլիկա) սխալի մեծության չափումը և համապատասխան ուղղում մտցնելը։

Դ. Վահրադյանը (Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտի Երևանի հենակետ) իր ելույթը նվիրեց մոմենտային դիտումների եղանակով աշխատավորների ընտանիքների կենսամակարդակի ուսումնասիրման մի քանի հարցերի փորձնական հետազոտությունների արդյունքներին։ Այդ հետազոտություններին նախորդել են մեթոդի փորձառական ստուգումները և ստացված արդյունքների ներկայացուցչականության աստիճանը համեմատվել է ուղղորդական բյուջետային վիճակագրության հետ։ Նախօրոք ընտրված ընտանիքների սահմանափակ շրջանակում անցկացվող բյուջետային վիճակագրության համեմատ, նոր եղանակը հնարավորություն է ընձեռում աշխատանքային և նյութական նույն ծախսումների պայմաններում տվյալներ ստանալ ավելի մեծ թվով ընտանիքների մասին, ճշտորեն պահպանելով ընտրանքային մեթոդի վիճակագրության տեսության պայմանները։

Ն. Ռիմաշևսկայան պատմեց մոմենտային եղանակով սպառողական բյուջեների հետազոտման ծրագրի մասին։ Այդ ծրագրում բյուջետային հետազոտություններում ընդգրկված հարցերից բացի մտցված են մի շարք նոր հարցեր, որոնց վերաբերյալ այժմ վիճակագրական նյութերի մեծ պահանջ կա։ Դրանք են. ընտանիքում առկա գույքը ըստ տեսակների ու ձևոր բերման ժամկետների, ընտանիքի անդամների սննդի կազմակերպումը (տանը, հասարակական ճաշարաններում, մանկապարտեզում և այլն), զանազան արտոնությունների միջոցով ընտանիքի անդամների հասարակական ֆոնդերից օգտվելու ձևերն ու ծավալները և այլն։

Ա. Շախսյարոնյանը (Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտ) հաղորդեց, որ կազմված է մոմենտային եղանակով անցկացված սպառողական բյուջեների հետազոտման հարցաթերթերի մեքենայական մշակման ծրագիր։ Ծրագրի հիմքում դրված է երկակի խնդիր, առաջին՝ լրիվ մեքենայացնել ամբողջ մշակումը և երկրորդ՝ առավելագույն չափով օգտագործել հետազոտման հարցաթերթում պարունակվող տեղեկությունները։

ՍՍՌՄ տնակչության վերարտադրության հիմնական օրինաչափությունների մասին զեկուցումով հանդես եկավ տնտեսագիտական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Բոգուլովը (Ռոստովի Ֆինանսական-տնտեսագիտական ինստիտուտ)։

Զեկուցողը պատմեց ՍՍՌՄ բնակչության վերարտադրության և տեղաբաշխման իր կատարած հեռանկարային հաշվարկների և նրանց մեթոդոլոգիական հիմքերի մասին։

Սովետական ընտանիքների սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրման մեթոդների ու ցուցանիշների մասին հաղորդումով հանդես եկավ Է. Զոմարյանը (Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտ)։ Նա նշեց, որ այժմ կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանում, տնտեսական ու կուլտուրական շինարարության մի շարք հարցերի լուծման համար ընտանիքների կազմի ու կառուցվածքի վերաբերյալ նյութերի մեծ անհրաժեշտություն է առաջանում։ Ել-

նելով դրանից Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտը բնտրանքային եղանակով հատուկ մշակման ենթարկեց 1959 թ. համամիութենական մարդահամարի Հայկական ՍՍՌ-ի նյութերը։ Ստացված նյութերի խորը վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ սովետական բնտանիքի հեռանկարային կազմը կանխատեսելու համար։

«Բնտանիքը և զբաղվածությունը» զեկուցումով հանդես եկավ Լ. Դավթյանը։ Նա լուսաբանեց բնտանիքի և զբաղվածության փոխհարաբերության մի քանի հարցեր։ Մեծ տեղ հատկացրեց կանանց զբաղվածության հարցին, և նշեց, որ կոլտնտեսականների հասարակական խմբում, բանվորների ու ծառայողների խմբի համեմատ, կանանց զբաղվածության մակարդակը բավական բարձր է։ Դա բացատրվում է նրանով, որ ՍՍՌՄ ԿԿՎ մեթոդոլոգիայի համաձայն զբաղվածների թվի մեջ առանց որևէ վերապահումի մտցված են նաև անձնական օժանդակ տնտեսությունում մասամբ զբաղված անձինք։ Զեկուցողն առաջարկում է. հետագայում անձնական օժանդակ տնտեսությունում զբաղվածությունը որոշելիս հաշվի առնել ինչպես տնտեսության չափը, այնպես էլ աշխատանքային ծախսումները այդ տնտեսությունում։ Համադրելով կանանց զբաղվածության մակարդակը մի քանի այլ միութենական ռեսպուբլիկաների հետ, զեկուցողը ընդգծեց, որ Հայաստանում կանանց զբաղվածության մակարդակը համեմատաբար ցածր է, որը հիմնականում բացատրվում է հայկական բնտանիքների բազմազավակությամբ, հասարակական սնդի ձեռնարկությունների և մանկական ու կոմունալ-կենցաղային հիմնարկների անբավարար ցանցով։

Զեկուցումներով հանդես եկան նաև Վ. Վոլկոնսկին (ՍՍՌՄ ԳԱ Մաթեմատիկական մեթոդների լաբորատորիա), Յու. Տարխանովսկին (ՍՍՌՄ Պետտնտեսանձնաժողովի հաշվողական կենտրոն), Լ. Բիրիկը (Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտ), Յա. Խանելիսը (Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտ) և Ա. Վոլկովը (Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտ)։

Զեկուցումների շուրջը առաջացավ մտքերի աշխույժ փոխանակություն։

Ընդարձակ ելույթով հանդես եկավ ՍՍՌՄ Պետտնտեսանձնաժողովի Ապրանքաշրջանառության բաժնի պետի տեղակալ Դ. Կորովկինը։ Նա սեմինարի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց հատկապես հրատապ լուծում պահանջող մի քանի խնդիրների վրա, ինչպես, օրինակ՝ բնտանիքի կազմի և զարգացման օրինաչափությունների ուսումնասիրության, սնդի ռացիոնալ նորմաների մշակման, բնակչության պահանջարկի ուսումնասիրության և այլն։

Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Սվ. Կապուստինը խոսեց մաթեմատիկական մեթոդները տնտեսագիտական ուսումնասիրությունների մեջ կիրառելու մի քանի հարցերի մասին։ Նա զգուշացրեց, որ մաթեմատիկական մեթոդները և սխեմաները պետք է զարգացնել տնտեսագիտական հետազոտությունների հետ սերտ փոխգործողությամբ, հակառակ դեպքում վտանգ է առաջանում պրակտիկ խնդիրներից կտրվելու և վերածվելու ինքնանպատակ կառուցումների։ Ընկեր Կապուստինն անհրաժեշտ համարեց յուրաքանչյուր մաթեմատիկական մոդել և սխեմա հիմնավորել տնտեսագիտական բազայով։ Ելույթ ունեցողի կարծիքով բնակչության կենսամակարդակի ուսումնասիրման բնագավառում կոչված է կարևոր դեր խաղալու աշխատավորների բնտանիքների եկամուտների և սպառման դիֆերենցիալ բալանսը, որը կուտ տարբեր նյութական ապահովվածության մակարդակի բնտանիքների կազմի, եկամուտների և սպառման քանակական բնութագիրը։ Վերջում նա նշեց, որ չի կարելի աշխատավարձը դիտել սոսկ որպես բաշխման հարաբերություն, աշխատավարձի կարգավորման միջոցառումները մշակելիս հաշվի է առնվում նաև նրա դերը, որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման հզոր լծակ։

Մի շարք ելույթ ունեցողների կողմից լուրջ առարկություններ հանդիպեցին պրոֆեսոր Ա. Դոգուլովի առաջադրած բնակչության հեռանկարային հաշվարկների մեթոդոլոգիական հիմքերը։

Սեմինարի մասնակիցները ամփոփեցին ժողովրդական սպառման պրոբլեմի ուսումնասիրման բնագավառում վերջին մեկ տարում կատարված աշխատանքների արդյունքները և ընդունեցին գիտական հանձնաժողովներ գիտա-հետազոտական աշխատանքների հետագա ուղղության և կոորդինացման վերաբերյալ։

Լ. ԴԱՎԹՅԱՆ